ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Երեց Ալեքսեյ Սամայկին,
Արևելյան Եվրոպայի
Տարածաշրջանի
Երկրորդ Խորհրդական

Հիսուս Քրիստոսի Քավությունը

Խոսելով Հիսուս Քրիստոսի Քավության մասին, մենք հիշում ենք այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Գեթսեմանիի այգում և Գողգոթայի վրա: Այդ իրադարձությունների շնորհիվ բոլոր մարդիկ ստացան իրենց մեղքերից փրկվելու անգնահատելի նվերը և հավերժական կյանքի հնարավորությունը: Մեր Փրկիչի կատարած Քավության շնորհիվ բոլոր անարդարությունները, դժվարությունները և ցավերը, որոնց մենք ենթարկվում ենք երկրային կյանքում, ամբողջությամբ կարող են փոխհատուցվել և ծառայել մեր օգտին: Օրհնությունները, որոնցից մենք զրկված ենք եղել այս կյանքում, մեզ կտրվեն հավերժության մեջ: Թեև Փրկիչը չի կարող անմիջապես թեթևացնել մեր բոլոր տառապանքները, Նա օրհնում է մեզ՝ տալով սփոփանք, ուժ և հասկացություն, որ «մեր բեռները հեշտությամբ տանենք» (Մոսիա 24.15): Հենց այդ պատճառով Փրկիչը հայտարարել է. «Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կ'տամ ձեզ»: Ինչպես ուսուցանել է մարգարե Ալման Մորմոնի Գրքում, Քավության օրհնությունները կիրառկանանան մեր երկրային կյանքում և հավերժության մեջ այնքանով, որքանով մենք հավատ կցուցաբերենք Հիսուս Քրիստոսի հանդեպ, կապաշխարենք մեր մեղքերի թողության համար, կմկրտվենք և կստանանք Սուրբ Հոգու պարգևը (Ալմա 7.14): Եթե մենք հետևենք Ալմայի հորդորներին և հավատարիմ մնանք մեր կապած ուխտերին, ապա կժառանգենք Աստծո ամենամեծ պարգևը՝ հավերժական կյանքը (ՎԱՌ 14.7):

Այնքանով, որքանով մենք ստանում ենք Քավության օրհնությունները, մենք հնարավորություն կունենանք այդ օրհնություններով կիսվել այլ մարդկանց հետ: Սուրբ գրություններից մենք գիտենք, որ Փրկիչն ուներ տարբեր որակական հատկանիշներ: Դրանցից մեկը կարեկցելու ունակությունն է: «Կարեկցել» բառը բոլոր իմաստներով նկարագրում է Հիսուս Քրիստոսի Քավության բուն էությունը: Կարեկցելով, մենք կիսում ենք ուրիշի ծանր բեռը, միաժամանակ ցուցաբերելով այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ ցավակցելը և նրա ապրումներին մասնակից լինելը: Մի անգամ աշխատանքից հետո, երբ իմ կինը՝ Լիդիան, դիմավորեց ինձ, սկսեց նկարագրել այն բարդ իրավիճակը, որում հայտնվել էր և ստիպված էր հաղթահարել իմ բացակայության ժամանակ: Իմ արձագանքը չուշացավ: Համարյա առանց մտածելու, ես սկսեցի նրան տալ, իմ տեսանկյունից, նպատակահարմար խորհուրդներ, թե ինչպես վերացնել ի հայտ եկած խնդիրը: Բայց ի պատասխան, Լիդիան, ինչպես միշտ, մեղմությամբ ու սիրով ինձ հասկացնել տվեց, որ առաջին հերթին ինքը ցավակցութուն և կարեկցանք էր սպասում ինձանից, ոչ թե խորհուրդներ խնդրի լուծման համար: Դասը, որ ստացա այդ երեկո, օգնեց ինձ ոչ միայն ավելի լավ ընկալել այդ սկզբունքի կարևոր նշանակությունը, այլև տեսնել կարեկցանք ունենալու ունակութան և Փրկիչի Քավության միջև կապը:

Մենք նույնպես կարող ենք հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին և գործնականում կիրառել Նրա Քավության սկզբունքները, եթե մեզ վրա վերցնենք ուրիշի բեռը: Քույրերից մեկն ինձ պատմեց, թե ինչպես է ամուսնու հետ թատրոն գնացել: Նախօրոք գնելով տոմսերը և կանխավայելելով հաճելի երեկո անցկացնելու զգացումը, նրանք մտան դահլիճ և գնացին դեպի իրենց տեղերը: Մոտենալով իր տեղին, իմ ծանոթուհին հայտնաբերեց, որ չի կարող լիարժեք վայելել ներկայացումը, քանի, որ բեմի տեսադաշտի մեծ մասը ծածկում էր մի սյուն:

Քրոջ խոսքերից ես հասկացա, թե սկզբում նա անկեղծ վրդովմունքի զգացում է ունեցել և արդեն պատրաստվում էր դիմել թատրոնի ղեկավարությանը իրեն մեկ այլ տեղ հատկացնելու պահանջով, բայց, նայելով դահլիճին, հայտնաբերեց, որ գրեթե բոլոր տեղերը զբաղված էին: Նա հասկացավ, որ եթե նույնիսկ իրեն ավելի լավ տեղ հատկացնեին, ապա հավանաբար ուրիշ մեկը պիտի նստեր իր տեղում: Այդ ժամանակ մի անսպասելի միտք ծագեց նրա գլխում: Եթե, այնուամենայնիվ, ինչ-որ մեկը պիտի տուժեր՝ նստելով այդ տեղը, ապա ինչու ինքն այդ բեռը չվերցնի իր վրա, որպեսզի հնարավորություն տա թատրոնի մնացած հյուրերին լիարժեք վայելել ներկայացումը:

Ինձ համար սա հասարակ օրինակ է, թե մեր առօրյա կյանքում մենք ինչպես կարող ենք կիրառել Հիսուս Քրիստոսի Քավության սկզբունքը, մեզ վրա վերցնելով ավելի ծանր բեռ, դրանով իսկ թեթևացնելով ինչ-որ մեկի կյանքը:

Փրկիչն ուսուցանում է. «Ով որ իրան անձը գտնում է՝ կ'կորցնէ նորան. Եւ ով որ իր անձն ինձ համար կորցրեց՝ նա կ'գտնէ նորան» (Մատթեոս 10.39): Հետևելով մեր Փրկիչի օրինակին, հավատք ցուցաբերելով Նրա Քավության հանդեպ, հնարավորություն փնտրելով մերձավորի կյանքը թեթևացնելու համար՝ մենք անկասկած ավելի կնմանվենք Նրան: Ի վերջո, մեր հոգևոր աճը չափվելու է ոչ միայն մեր գործերով, այլև նրանով, թե ով ենք մենք դարձել՝ անցնելով մեր երկրային ճանապարհը: ■

Երիտասարդների համաժողով

Մարիետա Կարապետյան, Արաբկիր ճյուղ

2017 թվականի օգոստոսի 1-4-ը «Արթուրս Աղվերան Ռեզորթ» հանգստյան գոտում տեղի ունեցավ Երևան Հայաստան Շրջանի երիտասարդների համաժողովը 14-18 տարեկանների մասնակցությամբ, որը կրում էր «Հարցրու Աստծուն» նշանաբանը: Յուրաքանչյուր մասնակցի համար պատրաստվել էր վերնաշապիկ, որի վրա գրված էր նշանաբանը, ինչը հիանալի անակնկալ հանդիսացավ երիտասարդների համար:

Համաժողովը շատ մանրակրկիտ պլանավորված էր Երեց և Քույր Մորթենսենների գլխավորությամբ: Այն հագեցած էր ուսուցողական, ինչպես նաև զվարճալի պահերով: Երիտասարդներին շարունակ հնարավորություն էր տրվում ուսուցանելու, վարելու, թարգմանելու և ղեկավարելու:

Առաջին օրը խմբերի բաժանվելով, երիտասարդները միասին ժամանակ անցկացրեցին և նկարեցին այն բաները, որոնք կարևոր են իրենց կյանքում, այնուհետև մեկնաբանեցին նկարները: Նրանց ծանոթացան միմյանց հետ խմբերում, հարցրեցին միմյանց նախասիրությունների մասին և ներկայացրեցին մեկը մյուսին ընդհանուր ժողովի ժամանակ: Օրվա հյուրերն էին Գալդունցների ընտանիքը: Նրանք խոսեցին տաճարի ու տաճարային ամուսնության մասին և կիսվեցին իրենց փորձառություններով ու վկայություններով: Ելույթի վերջում նրանք բաժանեցին բոլոր մասնակիցներին տաճարի նկարներ և հրավիրեցին կախել այդ նկարները իրենց սենյակներում, միշտ աչքի առաջ ունենալ դրանք և ձգտել արժանի լինել տաճար մտնելուն և այնտեղ ամուսնանալուն:

Երկրորդ օրը երիտասարդները սար բարձրացան: Նրանք երբեք չեն մոռանա այդ միջոցառումը: Արշավը բավական դժվար էր ու երբեմն վտանգավոր: Սակայն երիտասարդները դժվարությունները հաղթահարում էին՝ միմյանց օգնելով, բարձրացնելով, զվարճացնելով: Ընկերության բարձր դրսևորման շնորհիվ էր, որ այդ բարձունքը հաղթահարվեց ու լեռան գագաթին՝ Ծաղկունյաց լճի մոտ տեղի ունեցավ հոգևոր դաս: Այդ օրը նաև կհիշվի եղբայր և քույր Մելիքսեթյանների այցով: Երիտասարդների հետ նրանք խոսեցին աղոթելու և աղոթքի պատասխաններ ստանալու մասին, խոսեցին երկու իրավիճակի մասին, երբ մենք կարող ենք ստանալ մեր աղոթքի պատասխանը Երկնային Հորից, խորհուրդներ տվեցին ու կիսվեցին փորձառությամբ, թե ինչպես վարվել, երբ աղոթքի պատասխանը ուշանում է կամ չենք ստանում այն: Նրանց ելույթը շատ ուսուցողական էր երիտասարդների համար:

Երրորդ օրը բոլորը վայելեցին Նախագահ Բոսթրոմի ելույթը: Նա խոսեց Աստծո հետ «լավ գործընկեր» լինելու մասին: Նա ասաց, որ երբ մենք աղոթում ենք, սովորաբար, մեր խնդրանքները երեք խմբի են բաժանվում՝ օգնության, առողջության, երջանկության խնդրանքների: «Աստված լավ գործընկեր է», – ասաց Նախագահ Բոսթրոմը: «Նա կանի Իր մասը: Իսկ արդյո՞ք մենք լավ գործընկեր ենք Նրա համար: Որպեսզի մենք ստանանք օրհնություններ, մենք նույնպես պետք է լավ գործընկեր լինենք և կատարենք մեր մասը: Օրինակ,

Երեց Մարտինոն համաժողովի մասնակիցներից մեկի հետ

Համաժողովի մասնակիցներն իրենց ղեկավարների հետ

առողջության առումով լավ գործընկեր լինելու համար մենք պետք է պահենք Իմաստության Խոսքը, մարզվենք, ճիշտ սնվենք և այլն»:

Համաժողովի վերջին օրը երիտասարդները հանդիպեցին Յոթանասունի Քվորումից Երեց Ջեյմս Բ. Մարտինոյի հետ: Իր ելույթում նա հիշեցրեց Աստվածաշնչյան պատմությունը Դավիթի և Գողիաթի ու այն հինգ քարերի մասին, որոնք Դավիթը վերցրել էր Գողիաթի հետ կռվելու համար: Նա համեմատեց այն պատրաստվածության հետ, որը մենք պետք է ունենանք՝ մեր կյանքում հանդիպող «Գողիաթներին» հաղթելու համար: Դրանք են՝

1. Ամեն օր աղոթելը (շնորհակալություն հայտնելով Աստծուն նաև անպատասխան աղոթքների համար)
2. Պատրաստվելը շարունակ աճելուն (հավատքով, ապաշխարելով, միսիայում ծառայելով և այլն)
3. Ամեն օր սուրբ գրությունները կարդալը,
4. «Երիտասարդներին զորացնելու համար» գրքույկի հրահանգներին համաձայն ապրելը
5. Մարդկանց ծառայելը ■

Խաղեր

Պարեր

Սուրբ գրությունների խմբերով ուսումնասիրություն

Մկրտության սկզբունքները

Նախագահ Ալեն Բոստրոմ,
Հայաստան Երևան Միսիա

Հնայած մկրտությունը հիմնականում խորհրդանշական բնույթ ունի, մի քանի հասկացություններ օգնում են մեզ հասկանալ, թե Տերն ինչու է կանչել 70000 միսիոներների «ուսուցանելու ապաշխարություն և մկրտելու նորադարձներին»:

Հետևյալ երեք սկզբունքներն օգնում են մեզ գնահատել մկրտության կարևորությունը մեր կյանքում. առաջին՝ Քրիստոսը սահմանեց մկրտության կանոնները և օրինակով ցույց տվեց դրանք, երկրորդ՝ մկրտությունը այն դարպասն է, որը տանում է դեպի Հիսուս Քրիստոսի քավությունը, երրորդ՝ մենք ուխտ ենք կապում, հնարավորություն տալով, որ օրհնությունները մուտք գործեն մեր կյանք:

Մկրտությունը պատվիրան է

Միգուցե մենք չենք հասկանում մկրտվելու բոլոր պատճառները, սակայն դրա անհրաժեշտությունը կասկածի տակ չի դրվում: Քրիստոսը ցույց տվեց, որ նույնիսկ կատարելությունը չի վերացնում այս արարողության անհրաժեշտությունը: Նույնիսկ նրա զարմիկը՝ Հովհաննես Մկրտիչը, կասկածի տակ առավ մկրտության անհրաժեշտությունը, ասելով. «Ինձ պետք է քեզանից մկրտուիլ, եւ դու ի՞նձ մօտ ես գալիս»: Բայց, հասկանալով, Հիսուսը պատասխանեց. «Թոյլ տուր հիմա, որովհետեւ այսպէս է վայելում մեզ, որ ամեն արդարութիւն կատարենք»:

Նեփին ուսուցանում է այս պահանջը. «Եվ ահա, եթե Աստծո Գառը, լինելով սուրբ, պիտի կարիք ունենար մկրտվել ջրով՝ կատարելու ամեն արդարություն, Օ՜, ուրեմն՝ լինելով անսուրբ, որքա՜ն ավելի

շատ կարիք ունենք մենք՝ մկրտվելու, այո՛, հենց ջրով» (2 Նեփի 31.5)։

Կյանքում հանդիպում են որոշ իրավիճակներ, երբ մենք պետք է համապատասխանենք որոշակի չափանիշների, որպեսզի ստանանք օրհնությունները։ Վարորդական իրավունք ստանալու համար դուք պետք է լինեք օրենքով պահանջվող համապատասխան տարիքում։ Բժիշկը պետք է բժշկական կրթություն ստանա, նախքան կզբաղվի բժշկական պրակտիկայով։ Մկրտությունը այն առաջին արարողությունն է, որն անհրաժեշտ է, որպեսզի կանգնենք դեպի Աստված տանող ճանապարհի վրա։

Մկրտությունն իր հետ ներում է բերում

Խոսելով Գեդեոնի ժողովրդի հետ, Ալման ուսուցանեց, որ մկրտությունն անհրաժեշտ է մեր մեղքերից թողություն ստանալու համար։ Նա ասաց. «Արդ, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ապաշխարեք և վերստին ծնվեք, քանզի Հոգին ասում է՝ եթե դուք չծնվեք վերստին, դուք չեք կարող ժառանգել երկնքի արքայությունը. հետևաբար, եկեք և մկրտվեք ապաշխարության համար, որպեսզի կարողանաք լվացված լինել ձեր մեղքերից, որպեսզի կարողանաք ունենալ հավատք առ Աստծո Գառը, որը վեր է առնում աշխարհի մեղքը, որը հզոր է փրկելու ու ամեն անարդարությունից սրբելու» (Ալմա 7.14)։

Ուստի, Հիսուս Քրիստոսի և Նրա քավության հանդեպ հավատը մեզ արտոնում է սկսել ապաշխարության գործընթացը։ Ապա, իշխանություն ունեցողի կողմից կատարվող մկրտությունը բացում է դուռը, թույլ տալով, որ Հիսուս Քրիստոսի քավությունը ուժի մեջ մտնի։

Այն մեզ ընկերակից է դարձնում Քրիստոսի հետ։ Առանց այս ընկերակցության, դեպի կատարելագործում կատարած մեր յուրաքանչյուր քայլը պարզապես վարքագծի փոփոխության դրսևորում է։ Չնայած դրանք լավ փոփոխություններ են, սակայն չեն մաքրում նախկինում մեր կատարած սխալների պատճառով մեր հոգուն հասցված վնասը։ Մեր մեղքերի թողությունը տեղի է ունենում միայն, երբ մենք հրավիրում և ընդգրկում ենք Հիսուս Քրիստոսին մեր կյանք՝ նախ մկրտության արարողության, ապա հաղորդությունը ընդունելու միջոցով։ Այս ճանապարհով է Հիսուս Քրիստոսի Քավությունը սկսում է գործել մեր կյանքում։

Ինչպես նորածին երեխաներին են կոչում իրենց ծնողների անունով, այնպես էլ մենք, երբ «վերստին ծնվում ենք», մեզ վրա ենք վերցնում Քրիստոսի անունն ու դառնում «Քրիստոնյաներ»։ Մենք խոստանում ենք ձգտել ապրել Նրա նման, և երբևէ չարատավորել Նրա անունը։

Մկրտության ուխտը օրհնություններ է բերում

Երբ Ալման իր նորադարձներին առաջնորդում էր դեպի Մորմոնի ջրերը, նա նկարագրեց չորս օրհնությունները, որոնք ստանում ենք՝ կախված այն բանից, թե որքանով ենք մենք պահում ուխտի մեր բաժինը, որը կապում ենք մեր ընկերակցի հետ։ Առաջինը՝ փրկագնում Աստծո կողմից. Աստված կլինի մեր ընկերակիցը՝ մինչ մենք Երկրի վրա ենք։ Երկրորդ՝ կընդգրկվենք առաջին հարության մեջ. մենք իրավունք կունենանք մտնել սելեստիալ արքայություն։ Երրորդ՝ հավերժական կյանք. մենք իրավունք կունենանք հավերժ ապրել մեր ընտանիքների հետ։ Չորրորդ՝ Նրա Հոգին միշտ մեզ հետ կունենանք. Սուրբ Հոգու պարգևը մեզ կօգնի այս ամբողջ կյանքում։

Երբեմն ունկնդիրները հարցնում են միսիոներներից՝ արդյոք իրենք պետք է հետաձգեն մկրտությունը մինչև ավելի մեծ տարիքը, որպեսզի

Նախագահ Ալեն Բոստրոմ

մկրտությունն ավելի արդյունավետ մաքրի իրենց մեղքերից։ Չնայած այս մտածողությունը սխալ է շատ կողմերից, կարևոր է հասկանալ, որ առանց մկրտության դուք չեք ունենա Աստծուն՝ որպես ձեզ ընկերակից և չեք ստանա Սուրբ Հոգու մշտական պարգևը։

Բացի այդ, մաքրագործող ազդեցությունը, որը գալիս է ապաշխարությունից և Հիսուս Քրիստոսի քավությունից, չի կարող լինել իրենց կյանքի մասը և չի ունենա այն սփոփիչ գիտելիքը, որ պահելով պատվիրանները, նրանք իրավունք կունենան հավերժ միասին ապրել իրենց ընտանիքի հետ Երկնային Հոր արքայությունում։ Անիմաստ կլինի նույնիսկ մեկ օրով հետաձգել այս բոլոր օրհնությունները։

Մենք երջանիկ ենք, որ ժամանակակից մարգարեների և լրացուցիչ սուրբ գրությունների միջոցով հասկանում ենք և գիտենք, որ մկրտությունը անհրաժեշտ է յուրաքանչյուրին, և այն բերում է մեծ օրհնություններ և հավաստիացում, որ մենք արդար ճանապարհի վրա ենք։ ■

Աշակերտություն

Երեց Միտչել Ի. Ուելս, Հայաստան/Վրաստան միսիա

Երեց Միտչել Ի. Ուելս

Աշակերտության ուղին այն ճանապարհն է, որով պետք է քայլել մահկանացու կյանքի ամբողջ ընթացքում: Աշակերտությունն այն է, երբ քայլում ենք այն տեղերով, որտեղ Քրիստոսն է քայլել, և անում ենք այն, ինչ Նա է արել (գոնե փոքր չափով), որպեսզի ավելի նմանվենք Նրան: Դա այն է, երբ թույլ ենք տալիս, որ մեր կամքը «կուլ գնացած լինի Հոր կամքին»:

1996թ.-ին *Ensign*-ի «Դառնալ աշակերտ» հոդվածում Նիլ Ա. Մաքսվելլը գրել է. «Երբ մեր ուսերի վրա ենք կրում աշակերտության լուծը, մեծանում է մեր երկրպագությունը և գիտելիքները Հիսուսի մասին, քանի որ այդ ժամանակ նմանօրինակ, բայց սահմանափակ փորձառությունների միջոցով մենք անմիջականորեն զգում ենք փոքր, բայց ուսանելի բաժին այն ամենից, ինչ Փրկիչն է զգացել: Այս յուրօրինակ գործընթացում, որքան շատ կատարենք այն գործերը, որոնք Հիսուսը կատարեց, թույլ տալով, որ մեր կամքը «կուլ գնացած լինի Հոր կամքին», այնքան ավելի շատ կսովորենք (Մոսիա 15.7): Այս ընդօրինակումը անմիջականորեն մեծացնում է մեր երկրպագությունը Հիսուսի հանդեպ»:

Մեր կյանքը շատ կարևոր ժամանակ է մեզ համար, որպեսզի զգանք այն «փոքր, բայց ուսանելի բաժինն այն ամենից, ինչ Փրկիչն է զգացել»: Մեր գործն է սովորել արձագանքել այդ փորձառություններին այնպես, ինչպես Փրկիչը կարձագանքեր և ավելի շատ նմանվել Նրան ապաշխարության միջոցով:

Կյանքը ապաշխարության մի մեծ գործընթաց է: Մենք նույնիսկ կարող ենք ասել, որ աշակերտության նեղ արահետի երկու կողմերը եզրագծված են ապաշխարության կարմիր թելերով: Անհնար է մնալ արահետի վրա առանց ամենօրյա եռանդուն ապաշխարության: Իր այդ փոքրիկ ելույթում Նիլ Ա. Մաքսվելլը գրել է. «Ուստի մեզանից յուրաքանչյուրի համար անձնական կարևորագույն հարցը հետևյալն է՝ Արդյո՞ք մենք հաստատուն կերպով դառնում ենք այն, ինչ, ավետարանի վարդապետությունների օգնությամբ պիտի դառնանք: Թե՞ մենք պարզապես հարուստ ժառանգորդներ ենք ճշմարտության գտնված վիթխարի գանձի, բայց աղքատ ավանդատու ենք մեր անձնական զարգացման գործընթացում, որն այնքան անհրաժեշտ է աշակերտության համար»:

Աշակերտության արահետը մեր առաջընթացի և անձնական զարգացման ուղիներից մեկն է: Մեր ամբողջ կյանքի և եկեղեցում անդամության ողջ ընթացքում մենք սովորում ենք, թե ինչպես լավացնել ապաշխարության գործընթացը, որպեսզի ավելի նմանվենք Փրկիչին և սովորենք Նրանից: Կարևոր է հիշել, որ ապաշխարությունը հավասարապես կարևոր է ինչպես բացթողումների մեղքերից ինքներս մեզ ազատելու գործում, այնպես էլ զանցառությունների մեղքերից մաքրվելու գործում: Քանի որ, եթե զանցառություններ չենք կատարում, պարզապես կանխում ենք դժբախտությունը մեր կյանքում, մինչդեռ բացթողումների մեղքերի հաղթահարումը մեզ դարձնում է Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտները:

Սա այն է, ինչի հետ մենք ավելի հաճախ ենք առնչվում դեպի աշակերտությունը տանող մեր ճանապարհին՝ որպես Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամներ: Հնարավոր է, մենք մեծ մեղքեր չենք գործում, բայց փոխարենը բաց ենք թողնում այս աշխարհում բարիք գործելու բազմաթիվ հնարավորություններ: Հավանաբար, մենք չենք լսել Սուրբ Հոգու ձայնը այնտեղ, որտեղ պիտի լսեինք, կամ կիսվել մեր վկայությամբ, երբ տպավորություն ենք ունեցել այդպես վարվել, կամ չենք մեծարել Եկեղեցու մեր կոչումները, ինչպես հարկն է: Մենք միշտ պետք է հիշենք ընդգրկել այս սխալները մեր ամենօրյա ապաշխարության աղոթքներում, քանի որ ավելի շուտ բարիք գործելով, քան վատ գործեր չկատարելով, մենք ավելի ենք նմանվում Փրկիչին և սովորում Նրանից:

Ամեն շաբաթ, ճաշակելով հաղորդությունից, մենք հրաշալի հնարավորություն ենք ունենում նպատակներ դնել և ապաշխարել այն բաների համար, որոնք կարող էինք ավելի լավ կատարել: Մենք բոլորս պետք է օգտվենք հնարավորությունից և մտածենք այն մարդու մասին, ինչպիսին կցանկանայինք դառնալ հաջորդ շաբաթ, և նպատակներ դնենք դրան հասնելու համար: Ես գիտեմ, որ երբ մենք օգտագործենք ապաշխարությունը մեր կյանքում աշակերտության ճանապարհին հետևելու համար, Փրկիչի մասին կիմանանք այնպիսի բաներ, որոնք երբևէ չենք իմացել նախկինում, և մեր կյանքը կօրհնվի: Սրանից է ծնվում զորությունը, և դրա միջոցով մենք կդառնանք ճշմարտության ավելի արդյունավետ բարեխոսներ և Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ: ■

Երջանկության իմ ուղին

Սեդա Մամաջանյան, Վանաձոր ճյուղ

Սուրբ Հոգին երբեք մեզ չի լքում, եթե մենք Նրան հրավիրում ենք մեր կյանք:

Սրանից 13 տարի առաջ ընտանիքով Ռուսաստանից վերադարձանք Հայաստան՝ բնակվելու և մեր կյանքը նորովի սկսելու հայրենիքում: 2004 թվականին շատ գործարաններ և ձեռնարկություններ չէին գործում Հայաստանում: Մայրս անհանգիստ էր մեզ համար, որովհետև ես և ամուսինս երկու՝ 8 և 10 տարեկան երեխաների հետ էինք: Եվ դեռևս միակ հույսը մեր աղոթքներն էին և ծոմը, որի պատասխանը ես ստացել էի երազի միջոցով՝ ես և ամուսինս աշխատանք կունենանք այստեղ:

Հույսը մեր սրտում, ժամանեցինք հայրենիք և շարունակում էինք դեռ աղոթել ու խնդրել Աստծուն աշխատանքի համար: Ես կարդացի Մորմոնի գրքից մի հատված, թե արդյոք մեզանից յուրաքանչյուրը մի մուրացկան չէ Աստծո առաջ: Այո, այդ օրերին մի բան եմ միայն հիշում, որ ծնկի իջած աղերսում էի Աստծուն, որ մի աշխատանք գտնեմ: Կարճ ժամանակ անց ամուսինս տեղավորվեց աշխատանքի մի դպրոցում, իսկ ես շատ ցածր վարձատրությամբ մի աշխատանք գտա (շաբաթական 1500 դրամ (3 դոլար)): Մենք սկսեցինք վաստակել մեր հանապազորյա հացը, բայց ես միշտ հիշում էի Աստծո խոստումները. եթե ես ազնիվ տասանորդ վճարեմ, բաժին հանեմ աղքատներին իմ ունեցվածքից, Աստված կբացի «երկնքի պատուհանները, և դուրս [կ]թափի [ինձ] համար օրհնություն, այնպես որ բավականաչափ տեղ չլինի՝ ընդունելու այն» (3 Նեփի 24.10):

Ես հավատում եմ, որ եթե Հանգստության օրը սուրբ պահեմ, ես միշտ աշխատանք կունենամ: Եթե ես ազնիվ լինեմ մարդկանց հետ իմ հարաբերություններում, միշտ իմ վարձքը կստանամ: Եթե ես միշտ պահեմ Իմաստության Խոսքը, Աստված ինձ միշտ առողջ կպահի և ես կվազեմ և չեմ հոգնի: Եվ վերջապես, եթե ես միշտ ծառայեմ Տիրոջը Նրա Եկեղեցում, Նա միշտ հոգ կտանի իմ և իմ ընտանիքի համար, պահելով մեզ Իր ուղիների վրա:

Հետագայում ես ձեռք բերեցի ևս մեկ աշխատանք և Աստծո խոստումներն իրականացան: ■

Սեդա Մամաջանյան

Եկեք ապավինենք Տիրոջը

Բելլա Հարությունյան, Վանաձոր ճյուղ

Շատ դժվար է, երբ հարազատդ նեղության մեջ է և դու անզոր ես նրան օգնել:

Մի քանի շաբաթ առաջ մի դժվար իրավիճակի մեջ հայտնվեցինք ես և իմ ընտանիքը: Բազմաթիվ անկեղծ աղոթքներից հետո, հանկարծ մի միտք եկավ ինձ, որ կարող եմ ծոմ պահել և խնդրել Աստծուց առաջնորդություն:

Երկու օր ծոմ պահելուց հետո պատասխան ստացա Սուրբ Հոգու միջոցով, որ Աստված կարող է անհնարինը հնարավոր դարձնել: Ես հոգով զգացի, որ պետք է պարզապես վստահեի Տիրոջը: Արդեն երկու շաբաթ է անցել այդ օրվանից և ես տեսնում եմ, որ ինձ մտահոգող հարցը դրական լուծում է ստանում:

«Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողութեանը մի վստահիր:

Բելլա Հարությունյան

Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, եւ նա կուղղէ՝ քո ճանապարհները» Առակաց 3.5–6: Ես միշտ ապավինել եմ Երկնային Հորը, իմ բոլոր մտահոգություններով կիսվել Նրա հետ և խոնարհաբար փնտրել Նրա հզոր կամքը: Եվ ոչ մի անգամ Նա ինձ հուսախաբ չի արել: Ես միշտ զգացել եմ Նրա մեծ սերը իմ և իմ ընտանիքի նկատմամբ: ■

Տիրոջ գործիքը, որն օգնում է մեզ

Ջուլիետա Գալստյան, Վանաձոր ճյուղ

Ծոմը և աղոթքը հզոր միջոցներ են, որոնք մեր կյանքում հրաշքներ են գործում Աստծո զորությամբ:

Սրանից մի քանի տարի առաջ քրոջս աղջիկը՝ Մերին, գտնվում էր առողջապես ծանր վիճակում: Բժիշկներն անզոր գտնվեցին նրան բուժելու: Քրոջս ընտանիքն ապրում էր ինձանից հեռու՝ ուրիշ քաղաքում: Քույրս՝ իմանալով, որ ես հաճախում եմ մի Եկեղեցի, ուր ինքս Քահանայության զորությամբ բուժվել եմ մի հիվանդությունից, որն ինձ տանջում էր երկար տարիներ, դիմեց ինձ օգնության համար: Առաջին բանը, որ իմ մտքով անցավ, ծոմապահությամբ աղոթելն էր: Խոսքը մի դժվար և անբուժելի հիվանդության մասին էր: Ես անմիջապես ծոմ պահեցի և նրանց էլ առաջարկեցի աղոթել ինձ հետ միասին:

Դրանից մեկ ամիս անց Մերին ապաքինվեց և վերադարձավ ընտանիք, և մենք զգացինք Աստծո բուժիչ զորությունը ծոմի և աղոթքների միջոցով: Աստված նրա նկատմամբ մի հզոր սեր ցուցաբերեց՝ լսելով մեր անկեղծ աղոթքներն ու ընդունելով իմ ծոմապահությունը: ■

Երիտասարդները երջանկության մասին

Հարցազրույցը երիտասարդների հետ վարեց Իրինա Թ.

Երիտասարդները, հավանաբար, ավելի հաճախ, քան մեծերը, մտածում են, թե ինչ է երջանկությունը: Նրանց ապագան առջևում է և բնական է, որ նրանք այդ որոնումների մեջ են և նպատակ ունեն հասնել երջանկության հնարավորինս արագ: Սուրբ գրություններում ասվում է.«Ադամն ընկավ, որ մարդիկ լինեն, և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.25): Ուրախությունը երջանկության կարևոր մասն է և շատ մուտ է դրան: Ինչպե՞ս դառնալ երջանիկ և ունենալ ավելի շատ ուրախություն կյանքում: Այս հարցերը Իրինա Թ. տվեց իր ընկերներին: Ստորև նրանց պատասխաններն են:

Հովհաննես Պ. «Ադամն ընկավ, որ մարդիկ լինեն, և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն»: Սա իմ ամենասիրելի հատվածներից է այն պատճառով, որ առաջին հայացքից թվում է, թե անկումով մենք զրկվում ենք փրկությունից, բայց իրականում դա մեզ հնարավորություն է տալիս իմանալ ու զնահատել իսկական երջանկությունը: Ինչպես ասվում է այդ նույն գլխում, եթե չլիներ անկում, մենք չէինք գնահատի փրկությունը, քավությունը: Քրիստոսի քավությամբ է, որ մենք կարող ենք լինել երջանիկ: Կարծում եմ, դա այն է, երբ զգում ես ջերմություն, սեր և ուրախությունից սիրտդ, ասես, ուռչում, պատռվում է: Եվ, իմ կարծիքով, այդպիսի երջանկություն մենք հիմնականում ունենում ենք դժվար արգելքները հաղթահարելիս: Երբ մեր հարազատները առողջ են, երջանիկ, ապահով, մենք երջանիկ ենք լինում: Իմ սեփական փորձից ես գիտեմ, որ ամենամեծ սերը, դա Հոր սերն է, ու այն զգացումը, երբ քո մեղքերը քեզ ներվում են: Փրկության ծրագիրն իրոք կատարյալ է, ու իզուր չէ, որ այն նաև անվանվում է Երջանկության ծրագիր:

Աստղիկ Բ. Երբ մեր ընտանիքում և հարազատների մոտ ամեն ինչ լավ է, երբ մենք շրջապատված ենք մարդկանցով, ովքեր մեզ սիրում են , արդեն երջանիկ ենք: Մեր երջանկությանն է նպաստում նաև այն, որ մենք գտել ենք ճշմարիտ ուղին, որը մեզ հնարավորություն է տալիս ավելի մոտ զգալ Աստծուն և զգալ Սուրբ Հոգին, որպեսզի ճիշտ ընտրություններ կատարենք: Սրանք երջանկության առիթներ են:

Լիլիթ Հ. Այս կյանքում կատարվող ամեն բան նպաստում է, որ մենք ավելի լավը դառնանք: Տերը հաստատ չի ցանկանում, որ մենք վատ ապրենք կամ վատ ուղի բռնենք: Տերը մեզ տալիս է ամեն ինչ, բայց մենք երբեմն տրտնջում ենք և չենք գնահատում: Երբեմն մենք սխալ ուղի ենք բռնում: Երջանկությունն ինձ համար այն է, ինչ ես ունեմ և ինչ ինձ տվել է Աստված:

Կարեն Պ. Երկնային Հայրը ցանկանում է, որ ամեն մարդ երջանիկ լինի: Մենք բոլորս Երկնային Հոր զավակներն ենք: Այդ պատճառով Երկնային Հայրը պատվիրաններ է տվել, և եթե հնազանդվեք ու պահենք պատվիրանները, մենք երջանիկ կլինենք և՛ այս կյանքում, և՛ հավերժական կյանքում:

Իրինա Թ. Ես շատ եմ հավանում այս հատվածը: Այս հատվածում ասվում է, որ մենք պետք է ուրախ և երախտապարտ լինենք այն ամենի համար, ինչ ունենք: Մենք պետք է չտրտնջանք փորձություններից, որովհետև Աստված դրանք տալիս է մեզ, որ մենք կատարելագործվենք և նմանվենք Իրեն: Մենք երջանիկ ենք, որ ունենք պատվիրաններ, որոնք օգնում են մեզ ճիշտ ապրել և հաղթահարել փորձությունները: Մենք երջանիկ ենք, որ ունենք մեր եկեղեցին, սուրբ գրություններ, աղոթելու հնարավորություն, միսիոներներ, որոնք մեզ ճիշտ ուղին են ցույց տալիս, և Սուրբ Հոգի, ով առաջնորդում է մեզ: ■

Ինչպե՞ս հաղթահարել դժվարությունները և գայթակղությունները

Պատահո՞ւմ է այնպես, որ ձեր շրջապատում գտնվող մարդիկ ազդում են ձեզ վրա և գայթակղում են ձեզ: Ինչպե՞ս եք դուք հաղթահարում ձեզ շրջապատող վատ ազդեցությունները և գայթակղությունները: Սիա երեք երիտասարդ չափահասների պատասխանները: Իսկ դուք ինչպե՞ս կպատասխանեիք այդ հարցերին:

Տաթևիկ Շաբոյան, Արաբկիր ճյուղ Ես սովորաբար ընտրում եմ իմ շրջապատը և չեմ գտնվում այնպիսի մարդկանց մեջ, ովքեր կփորձեն գայթակղել ինձ անելու ոչ ճիշտ բաներ: Երբ մարդը կայացած է իր արժեհամակարգով և ունի ամուր հավատ առ Աստված, շրջապատի գայթակղությունները չեն կարող ազդեցություն ունենալ նրա կյանքում:

Կան տարբեր միջոցներ վատ ազդեցության տակ չընկնելու համար: Գտնում եմ, որ մեզ տրվում է ուժ Տիրոջից, եթե իրոք անկեղծ միտումով խնդրում ենք: Պետք է նաև ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները, ծառայել, շրջապատել մեզ ճիշտ մարդկանցով: Աստծո տված ուժը ավելի զորեղ է, քան աշխարհիկ գայթակղությունների ազդեցությունը:

Տաթևիկ Շաբոյան

Էրիկ Գասպարյան, Արաբկիր ճյուղ. Աստծուն՝ մեզ սիրող Հորն իմանալն ու Նրա ծրագրում մեր դերը հասկանալը փոխում է դժվարությունների հանդեպ մեր վերաբերմունքը: Մենք գիտենք, որ Նրա ծրագիրը իրական հավերժական ծրագիր է: Նա սիրող և հոգատար է: Աղոթքը առաջնային նշանակություն ունի փորձությունները հաղթահարելու և զորանալու գործում:

Շատ կարևոր է, որ մենք՝ մարդիկ, հաստատակամ լինենք Փրկիչին հետևելու մեր որոշման մեջ, այդ դեպքում ոչ ոք զորություն չի ունենա մեզ շեղելու ուղուց: Վերջերս, երբ շատ դժվար էր մեզ համար, մեզ օգնեց ՎԱՌ 84.88 հատվածը մտապահելը. «Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և հրեշտակները ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:



Էրիկ Գասպարյանը իր տիկնոջ հետ

Մենք ուժեղ ենք որպես ամուսիններ, երբ աղոթքի մեջ ենք ու միշտ կենտրոնացած ենք աստվածային սիրո ու արժեքների վրա՝ այն սիրո, որը հեշտությամբ չի գրգռվում և չի փնտրում իրենը, այլ լի է ողորմությամբ ու համբերությամբ:

Գրիգոր Գալդունց, Աջափնյակ ճյուղ. Իրականում այդ հարցերի հիմքը գիտելիքի ու վկայության խորությունն է, հիմնականում՝ իմաստության խոսքի, մաքրաբարոյության օրենքի ու առաքինի վարքի առումով: Դրանցից էլ գալիս են հարցերի պատասխանները: Որքան խորն է այդ գիտելիքն ու վկայությունը, այնքան մարդ ավելի անսասան է շրջապատից եկող գայթակղությունների դեմ: Մենք էլ, փոխադարձաբար, ազդում ենք շրջապատի վրա՝ օգնելով մարդկանց իմանալ ու պահել Աստծո պատվիրանները և գալ դեպի Քրիստոսը: ■

Գրիգոր Գալդունց

ARMENIAN